



**USAID**  
FROM THE AMERICAN PEOPLE

**FINANCIAL SECTOR  
DEEPENING PROJECT**



**ԱՊԱՐՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ**

**Չիմնական տեղեկություններ**

**Ամենակարևոր դրույթներ**

**Անհրաժեշտ գիտելիքներ**

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

<b>Ներածություն</b>	<b>3</b>
<b>1. Ապահովագրություն և ապահովագրության ենթակա ռիսկեր</b>	<b>3</b>
1.1. Ոչ բոլոր ռիսկերն է հնարավոր ապահովագրել	3
1.2. Ապահովագրական կորուստ	4
1.3. Ապահովագրական շահի սկզբունքը	4
<b>2. Ապահովագրության գործարքի կողմերը</b>	<b>5</b>
2.1. Ապահովադիրը կամ ապահովագրողը	5
2.2. Ապահովագրված անձ	5
2.3. Շահառու	5
<b>3. Ապահովագրական ծածկույթ</b>	<b>7</b>
3.1. Ապահովագրական գումար	7
3.2. Ապահովագրական գումարի սահմանումը կյանքի ապահովագրությունում	7
3.3. Ապահովագրական արժեքը	8
<b>4. Ապահովագրության պայմանագիր</b>	<b>9</b>
4.1. Ապահովագրության պայմանագրի կնքման ձևը	9
4.2. Ապահովագրության պայմանագրի կնքման իրավական երկու կարևոր նախապայմանները	9
4.3. Ապահովագրական պայմանագրի էական պայմանները	9
4.4. Ապահովագրության պայմանագրում ապահովագրական պատահարի (պատահարների) ցանկի սահմանման կարգը	11
4.5. Ապահովագրության պաշտպանության ժամանակաշրջանը	11
4.6. Ապահովագրության պայմանագրի էական հանգամանքները	12
4.7. Ապահովագրության պայմանագրի ընդհանուր պայմանները կամ կանոնները	12
4.8. Ապահովագրական պայմանագիրը վաղաժամկետ լուծման հիմքերը	13
<b>5. Ապահովագրական պոլիս</b>	<b>13</b>
5.1. Ապահովագրության վկայագիր (պոլիս)	13
5.2. Ապահովագրական վկայագրի վավերապայմանները	14
<b>6. Ապահովագրական պատահար և հատուցում</b>	<b>14</b>
6.1. Ապահովագրական պատահարը	14
6.2. Հատուցման ենթակա ապահովագրական դեպքերը	14
6.3. ՖՈՒՆԾԻԶԱ - Ապահովադրի մասնակցությունը ապահովագրական դեպքից առաջացած կորստի ծածկման մեջ	16
6.4. Ապահովագրական հատուցումից ազատելու հիմքերը	17
6.5. Հատուցման մերժման հիմքերը	17
6.6. Սուբրոգացիայի սկզբունքը	19

## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ապահովագրության սույն ուղեցույցը նպատակ ունի սպառազնեցիկ կամ ապագա ապահովադիրներին հանրամատչելի ձևով ծանոթացնել ապահովագրության տեսական և իրավական հիմքերի հետ, նրանց որոշակիորեն կողմնորոշել ապահովագրության ծառայությունների լայնածավալ ուղորտում: Ուղեցույցում անդրադարձ է արված նաև առանձին գործնական հարցերի, որոնք ունեն խիստ կիրառական նշանակություն:

Ուղեցույցի կառուցվածքում ու հարցերի շրջանակում ներառվել են ապահովագրության և ապահովագրության ենթակա ռիսկերի, ապահովագրության գործարքի կողմերի, ապահովագրական ծածկույթի, ապահովագրական պայմանագրի ու վկայագրի, ապահովագրական պատահարի և հատուցման վերաբերյալ բացատրական դրույթներ, մեկնաբանություններ, պարզաբանումներ և առանձին հաշվարկային օրինակներ:

## **1. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԵՆԹԱԿԱ ՌԻՍԿԵՐ**

*Ի՞նչ է ապահովագրությունը և արդյո՞ք այն մեզ անհրաժեշտ է*

Ապահովագրությունը վճարովի հիմքով հնարավոր ռիսկերից առաջացող կորուստների փոխանցում է ապահովագրողին, որը պատրաստ է դրանց ի հայտ գալու դեպքում հատուցել այդ կորուստների դիմաց:

Անհրաժեշտ է իմանալ, որ ապահովագրության հիմնարար սկզբունքներից է այն, որ ապահովագրական դեպքերը պետք է լինեն անորոշ կամ անսպասելի բնույթի, քանի որ սկզբունքորեն ապահովագրության ենթակա չեն այն դեպքերն ու իրադարձությունները, որոնցում բացակայում է պատահականությունը, այլ կերպ ասած, այդ իրադարձությունները կանխորոշված չեն և կախված չեն կողմերի կամքից (բացառությամբ կյանքի ապահովագրության):

**Ապահովագրության մասին հիշատակում Հայաստանի պատմությունից**

1184-ին թվագրված դատաստանագրքի «խորտակված նավի մասին» մասում Մխիթար Գոշը տալիս է հետևյալ սահմանումը. «խորտակված նավը մերձակայքում գտնվող քաղաքի օգնությամբ փրկվի որովհետև որ նախկինում վայելում էր նավի բերած օգուտներից, իսկ օտար նավի դեպքում նրանից ավար առնելը՝ դատաստանի է ենթակա: Եվ եթե ձրի կամենան փրկել, այդ դեպքում, (փրկվածները) որքան հնարավոր է, այդքան վարձ տան, նաև օրենքի մասին խորհրդածելով և այն խորհուրդը նկատի ունենալով, որ ասում է՝ ընկած գրաստղ հասցնել իր տիրոջը (Բ Օրենք, ԻԲ 1-4 «Մովսեսի օրենքը»):» Ըստ Մխիթար Գոշի՝ խորտակվող նավին փրկելն հիմնված է փոխօգնության սկզբունքի վրա, իսկ փոխադարձ ապահովագրությունը կանգնած է ապահովագրության ակունքներում և որոշակի խնդիրների համար մինչ օրս արդյունավետ գործում է:

### **1.1. Ոչ բոլոր ռիսկերն է հնարավոր ապահովագրել Ո՞ր ռիսկերը չի կարելի ապահովագրել**


Բացի ոչ պատահական ռիսկերից, օրենսդրությունը նաև չի թույլատրում ապահովագրել երկու բնույթի ռիսկեր՝

- 1) հակաօրինական շահերի ապահովագրությունը,
- 2) խաղերին, վիճակախաղերին և գրազին մասնակցելու հետևանքով առաջացած վնասների ապահովագրությունը:

Նույնիսկ եթե մնան ռիսկեր ներառվեն ապահովագրական պայմանագրում, միևնույնն է այդ պայմանագիրը օրինական ուժ չի ունենա:



## 1.2. Ապահովագրական կորուստ



Գույքի ամբողջ կամ մասնակի կորուստը, որն ապացուցվել է ապահովագրական դեպքի մասնագիտական գնահատման արդյունքում: Հատուցման ենթակա է միայն փաստացի **ապացուցված** կորուստը:

## 1.3. Ապահովագրական շահի սկզբունքը

Ապահովագրական շահը տվյալ գույքի պահպանման կամ անձի կյանքի և առողջության պահպանման նկատմամբ ապահովագրվողի շահն է:

Ապահովագրական շահի բացակայությունը չի շահագրգռում ապահովագրվողին կանխարգելել ռիսկը և բացի այդ կարող է առաջացնել խաբեության ու միտումնավորության շարժառիթներ:

Օրինակ՝ գույքային ապահովագրության տեսակներում ապահովագրական շահի դրսևորումներից է գույքի նկատմամբ սեփականության, երկարաժամկետ վարձակալության իրավունքը: Մեկ այլ օրինակ՝ վերանորոգման հանձնված հեռուստացույցի նկատմամբ վարպետը ունի այն պահպանելու շահ, քանի որ նա, ցանկացած դեպքում՝ պետք է վերադարձնի հեռուստացույցը: Հետևապես նման արհեստանոցը ապահովագրում է վերանորոգման հանձնված բոլոր սարքերը:

Կյանքի ապահովագրությունում ապահովագրական շահի ընդունված դրսևորումներից են՝ սեփական կյանքի ապահովագրությունը, գործատուի շահը իր աշխատողների կյանքի նկատմամբ, անուսինների կյանքի հանդեպ փոխադարձ շահը, ծնողների շահը զավակների կյանքի նկատմամբ, փոխատուի շահը փոխառուի կյանքի նկատմամբ, բիզնեսում գործընկերների կյանքի փոխադարձ շահը:

Ապահովագրվողի կամ շահառուի մոտ ապահովագրված գույքի պահպանման նկատմամբ շահագրգռվածության բացակայության դեպքում գույքի ապահովագրության կնքված պայմանագիրն անվավեր է:

Օրինակ՝ ավտոմեքենայի ապահովագրության համար դիմած անձից պարտադիր կպահանջվի սեփականության, վարձակալության կամ այլ փաստաթուղթ, որը կհավաստի այդ անձի շահը մեքենայի պահպանության նկատմամբ:

### Ապահովագրական շահի օրենսդրական ամրագրումը

Ապահովագրական շահի սկզբունքը պատմականորեն առաջին անգամ օրենսդրորեն ամրագրվել է Անգլիայում 1774թ. «**Խաբեքաների մասին ակտ**»-ով, որը պահանջում էր, որպեսզի կյանքի ապահովագրություն կնքող անձն ապահովագրական շահ ունենար ապահովագրվող անձի կյանքի նկատմամբ:

Դա պայմանավորված էր այն հանգամանքով, որ այդ ժամանակներում լայն տարածում էր ստացել թագավորական ընտանիքի անդամների կամ հանրահայտ հանցագործների կյանքի նկատմամբ ապահովագրական խաղաղությունների կատարումը: Այդ երևույթը կյանքի ապահովագրությանը ակնհայտորեն հաղորդում էր սպեկուլյատիվ բնույթ և որևէ կապ չունեի դրա ուղղակի ապահովագրական գործառույթի

## 2. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱՐՔԻ ԿՈՂՄԵՐԸ

### 2.1. Ապահովադիրը կամ ապահովագրվողը

Ապահովադիրը կամ ապահովագրվողը ապահովագրողի հետ ապահովագրության պայմանագիր կնքած անձն է: Ապահովադիրը՝ ապահովագրության պայմանագրի այն կողմն է, որին կամ որի մատնանշած անձին (շահառուին) ապահովագրողը պարտավորվում է հատուցել այն վնասը, որը պատճառվել է ապահովագրական պատահարի արդյունքում:

### 2.2. Ապահովագրված անձ

Ապահովադիրը հետ միասին ապահովագրության պայմանագրի կողմերից կարող է հանդիսանալ նաև ապահովագրված անձը, որի օգտին ապահովադիրը կնքում է ապահովագրական գործարքը: Այսինքն ապահովագրական դեպքը կարող է տեղի ունենալ այդ անձի հետ, անմիջապես և ուղղակիորեն կապված լինել այդ անձի հետ, օրինակ՝ նրա կյանքի որոշակի հանգամանքների հետ, կամ նրա գույքային իրավունքների և շահերի պահպանման հետ:



Ապահովագրված անձը պարտադիր պետք է նշվի անձնական ապահովագրության պայմանագրում: Ընդ որում, ապահովագրված անձ կարող է հանդիսանալ ինքը ապահովադիրը կամ այլ անձ, օրինակ՝ ապահովադրի զավակը, կազմակերպության աշխատակիցը և այլն:

Օրենքը թույլ է տալիս, որ ապահովագրության պայմանագրում նշված ապահովագրված անձը ապահովադրի կողմից փոխարինվի այլ անձով՝ սակայն միմիայն վերջինիս գրավոր համաձայնությամբ:

### 2.3. Շահառու

Ապահովագրական գործարքը պարտադիր պետք է ունենա շահառու: Շահառուն ապահովագրական պատահարի տեղի ունենալու պարագայում պայմանագրով նախատեսված հատուցում ստանալու իրավունք ունեցող անձն է:

Ապահովագրության պայմանագրերում հաճախ ապահովադիրն ու շահառուն միևնույն անձն է, այդ իսկ պատճառով շահառուի իրավական կարգավիճակը չի ընդգծվում:

Սակայն ապահովադիրն իրավունք ունի ապահովագրության պայմանագիր կնքել հօգուտ այլ անձի՝ շահառուի: Նման պայմանագրում ապահովադրի և ապահովագրված անձի հետ մեկտեղ պայմանագրի առանձին մասնակից է դառնում շահառուն:



Օրինակ՝ վարկով զնված ավտոմեքենայի ապահովագրական պայմանագրում **ապահովադիրը** - մեքենայի սեփականատերն է, իսկ **շահառուն**՝ վարկ տրամադրած բանկն է (իհարկե՝ վարկի չմարված գումարի մասով, մնացած հատուցումը ապահովադիրինն է):

Ըստ էության շահառուն դա ապահովադիրն է, իսկ անձնական ապահովագրության պայմանագրում՝ ապահովագրված անձն է: Սակայն որոշ դեպքերում շահառուն ոչ ապահովադիրն է, ոչ էլ ապահովագրված անձը, այլ բոլորովին այլ անձ է, որը չի նշվել ապահովագրության պայմանագրում, օրինակ՝ անձի ժառանգը՝ նրա մահվան դեպքում:

Ապահովադիրն իրավունք ունի ապահովագրության պայմանագրում նշված շահառուին փոխարինել այլ անձով՝ այդ մասին գրավոր ծանուցելով ապահովագրողին:

Ապահովադրի, ապահովագրված անձի և շահառուի պայմանագրային կարգավիճակները



## ԳՈՐԾՆԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ

### Ինչպես է իրականացվում կյանքի ապահովագրության պայմանագրով շահառուի փոխարինումը

Համաձայն օրենքի, կյանքի ապահովագրության պայմանագրով ապահովագրված անձի համաձայնությամբ նշանակված շահառուին թույլատրվում է փոխարինել միայն ապահովագրված անձի համաձայնությամբ:

### Կարող է արդյոք ապահովադրի մահվան դեպքում նրա ժառանգը փոխարինել այն շահառուին, որը նշված է ապահովագրության պայմանագրում

Համաձայն օրենքի, ապահովադրի մահվան դեպքում, նրա ժառանգները չեն կարող փոխարինել պայմանագրում նշված շահառուին:

### 3. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԾԱԾԿՈՒՅԹ

#### 3.1. Ապահովագրական գումար

Ապահովագրական գումարը կամ ապահովագրական ծածկույթը ապահովագրության առանցքային հասկացություններից է, որը լավ պետք է պատկերացնեն ապահովադիրները կամ սպառողները: Ապահովագրական գումարը կամ ապահովագրական ծածկույթը դա դրամական արտահայտությամբ այն գումարն է, որի սահմաններում ապահովագրվում է ապահովագրության օբյեկտը և տեղի ունեցած ապահովագրական դեպքի ժամանակ իրականացվում է հատուցումը:



*Հատուցման մեծությունը կախված է կրած վնասի մեծությունից, սակայն չի կարող ավել լինել ապահովագրական գումարից:*

Կամավոր ապահովագրության դեպքում ապահովագրական գումարը որոշվում է ապահովադրի և ապահովագրողի համաձայնությամբ, բայց ոչ ավելի, քան ապահովագրական արժեքը (այն է՝ գույքի իրական կամ շուկայական արժեքը), իսկ պարտադիր ապահովագրության դեպքում այն սահմանվում է օրենքով:

#### ԳՈՐԾՆԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ ?

**Կտրվի արդյո՞ք հատուցում երբ ապահովագրական գումարը գերազանցել է ապահովագրական արժեքը**

Այն դեպքում, երբ գույքի ապահովագրության պայմանագրում նշված ապահովագրական գումարը գերազանցում է ապահովագրական արժեքը, ապա գույքին պատճառված վնասը հատուցվում է միայն ապահովագրական արժեքի չափով: Միևնույն ժամանակ օրենքը շեշտում է, որ այդ դեպքում ապահովագրավճարի հավելյալ վճարված մասը չի վերադարձվում:

*Ապահովագրական արժեքը գերազանցող հատուցումը ապահովադրի կրեթի եկամուտ կամ շահույթ, ինչը հակասում է ապահովագրության հիմնարար սկզբունքներին:*

#### 3.2. Ապահովագրական գումարի սահմանումը կյանքի ապահովագրությունում



##### Որքա՞ն արժե Ձեր ԿՅԱՆՔԸ

Կյանքի ապահովագրությունում ապահովագրական գումարի բացարձակ մեծության սահմանափակում չի կարող լինել, քանի որ յուրաքանչյուր մարդու կյանքը անգնահատելի է անկախ նրանից թե ով է այդ մարդը՝ հաջողակ բիզնեսմեն, հայտնի քաղաքական գործիչ, թե, շարքային աշխատող: Կյանքի ապահովագրության դեպքում սահմանվում է վճարը և ոչ թե արժեքը:

Սակայն, ըստ պահովագրողների կյանքի ապահովագրությունում ապահովագրական գումարը պետք է խելամիտ լինի և համապատասխանի հաճախորդի (ապահովադրի) կարողություններին և վիճակին:

Հաճախորդի կամ ապահովադրի կողմից մեծ ապահովագրական գումարի հայտը հանդիսանում է կարևոր և լուրջ նախազգուշացնող ահազանգ այն բանի վերաբերյալ, որ հաճախորդն ունի լուրջ խնդիրներ, որոնք թաքցվում են:

*Ապահովագրողները, որպես կանոն, ապահովադրի կարողություններին և վիճակին համապատասխան խելամիտ են համարում այն պահանջը, երբ ապահովադրի ապահովագրական գումարի առավելագույն մեծությունը չի գերազանցում նրա տարեկան եկամտի տասնապատիկը:*

### 3.3. Ապահովագրական արժեքը

Ապահովագրական արժեքը գույքային ապահովագրության տվյալ գույքի իրական կամ շուկայական արժեքն է:

Գույքային ապահովագրության դեպքում ապահովագրական գումարը չի կարող գերազանցել նրա ապահովագրական արժեքը, քանի որ հատուցման դեպքում դա կհանգեցնի ապահովադրին գույքի վերականգնման համար պահանջվող հավելյալ միջոցների վճարմանը կամ ապահովադրի կողմից եկամտի ստացմանը:

Ապահովագրողի և ապահովադրի համաձայնությամբ ապահովագրական գումարը կարող է սահմանվել ապահովագրական արժեքից ցածր:

## ԳՐԾՆԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ

### Ապահովագրական հատուցման հաշվարկը «համամասնական» եղանակով:

Այն դեպքում, երբ ապահովագրական գումարը սահմանվել է ապահովագրական արժեքից ցածր, ապահովագրողը պետք է ապահովադրին կամ շահառուին հատուցի կրած վնասները մասամբ, օրինակ՝ «համամասնական պատասխանատվության» եղանակով՝ ապահովագրական գումարի և ապահովագրական արժեքի համամասնությամբ:

Օրինակ՝ կնքված պայմանագրով գույքի ապահովագրված արժեքը կազմել է 1,500,000 դրամ, պայմանագրով ապահովագրական գումարը կազմել է 750,000 դրամ: Ապահովագրական դեպքից առաջացած կորուստը կազմել է 500,000 դրամ: Ապահովագրական գումարի և ապահովագրական արժեքի հարաբերակցությունը կկազմի 50%, իսկ ապահովագրական հատուցման գումարը կկազմի 250,000 դրամ ( $500\ 000 \times 50\%$ ):

### Հատուցման հաշվարկը «առաջին ռիսկի» եղանակով:

Ըստ «առաջին ռիսկի» եղանակով հատուցումը կիրառվում է գույքի ոչ լրիվ ապահովագրություն դեպքում: Ապահովագրական հատուցումն իրականացվում է կրած վնասի մեծության չափով, սակայն ոչ ավելի ապահովագրական գումարի մեծությունից:

Եթե կրած վնասը կազմում է 500,000 դրամ, իսկ ապահովագրական գումարը՝ 750,000 դրամ, հատուցումը կտրվի ամբողջությամբ: Եթե փաստացի վնասը գերազանցի ապահովագրական գումարը կամ մեր օրինակում՝ 750 000 դրամը, ապա այն գերազանցող մասով հատուցում չի տրվի:

Ըստ առաջին ռիսկի հատուցման եղանակը հաճախ կիրառվում է պատասխանատվության ապահովագրության ժամանակ:

## **Ի՞նչ իրավունքներ ունի ապահովագրողը ապահովագրվող գույքի իրական (շուկայական) արժեքը և դրա հետ առընչվող ռիսկերը պարզելու առումով**

Ոչ կյանքի ապահովագրության պայմանագիր կնքելիս ապահովագրողն իրավունք ունի ուսումնասիրելու և զննելու ապահովագրական օբյեկտը, իսկ անհրաժեշտության դեպքում՝ նշանակելու փորձաքննություն՝ դրա իրական (շուկայական) արժեքը պարզելու համար:

## **Ապահովագրվող գույքի փորձաքննությունը**

Ապահովագրվող գույքի արժեքի վերաբերյալ փորձաքննությունն իրականացվում է ապահովագրության պայմանագրում շահագրգռվածություն չունեցող անձի կողմից նշանակված փորձագետի կամ կողմերից յուրաքանչյուրի նշանակած փորձագետների կողմից:

Փորձաքննության արդյունքները չեն կարող վերջնական համարվել, քանի որ ապահովագրական օբյեկտի վերաբերյալ փորձագետի եզրակացությունը պարտադիր ուժ չունի կողմերի համար, եթե ակնհայտ է, որ այն չի համապատասխանում դրա իրական (շուկայական) արժեքին:

## **4. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ**

### **4.1. Ապահովագրական պայմանագրի կնքման ձևը**

ՀՀ-ում ապահովագրության պայմանագիրը, կնքվում է միայն գրավոր: Բանավոր ապահովագրական պայմանագրերն անվավեր են:



### **4.2. Ապահովագրության պայմանագրի կնքման իրավական երկու կարևոր նախապայմանները**

Ապահովագրության պայմանագրի կնքման համար ապահովադիր քաղաքացիները պետք է լինեն գործունակ: Անձի գործունակությունը, համաձայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի, լրիվ ծավալով ծագում է չափահաս, այսինքն՝ տասնութ տարեկան դառնալու պահից:

Ապահովագրության պայմանագրի կնքման երկրորդ կարևոր նախապայմանը հանդիսանում է ապահովագրական շահի առկայությունը:

### **4.3. Ապահովագրական պայմանագրի էական պայմանները**

Կարևոր է, որ ապահովադիրը պայմանագիր կնքելիս իմանա դրա էական պայմանների մասին, քանի որ ապահովագրական պայմանագիրը կարող է համարվել կնքված միայն այն դեպքում, երբ համաձայնություն է ձեռք բերվել բոլոր էական պայմանների շուրջ:

Ապահովագրության պայմանագրի և վկայագրի էական պայմանները սահմանված են ՀՀ քաղաքացիական օրենսգրքով, դրանք են՝

- 1) ապահովագրության օբյեկտը,
- 2) ապահովագրական պատահարը, որի տեղի ունենալու դեպքում տրվում է ապահովագրական հատուցումը,
- 3) ապահովագրական գումարի չափը,
- 4) ապահովագրական հատուցման կարգը,
- 5) ապահովագրավճարի չափը,
- 6) ապահովագրական պատահարի տեղի ունենալու մասին ապահովադրի և (կամ) շահառուի կողմից ապահովագրողին տեղեկացնելու կարգը և ժամկետները,
- 7) վնասի գնահատման կարգը,

- 8) ապահովադրի կողմից ապահովագրավճարի՝ պայմանագրում սահմանված ժամկետներում և կարգով չվճարելու հետևանքները,
- 9) ապահովագրության պայմանագրի գործողության ժամկետը,
- 10) ապահովագրության պայմանագրի փոփոխման, լրացման և վաղաժամկետ լուծման կարգը,
- 11) նշում այն մասին, որ ապահովադիրը ծանոթացել է ապահովագրության պայմանագրի պայմաններին,
- 12) ապահովագրության պայմանագրի կնքելու տարին, ամիսը, օրը:

Ընդունված պրակտիկայի համաձայն ապահովագրական պայմանագրում կարող է նշվել նաև այն տարածքը, որի վրա տարածվում է ապահովագրության պայմանագրի գործողությունը:

## ԳՐԾՆԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ

### Ապահովագրավճարի չափի որոշումը վճարման կարգը և ժամկետները:

Ապահովագրության ծառայության գինն արտահայտվում է ապահովագրավճարի (պարգևավճարի) ձևով, որը վճարում է ապահովադիրը:

Ապահովագրավճարի չափը, վճարման կարգը և ժամկետները սահմանվում են ապահովագրության պայմանագրով և, որպես կանոն, մնում է անփոփոխ պայմանագրի գործողության ընթացքում, եթե այլ բան նախատեսված չէ պայմանագրով:

Ապահովադիրը ապահովագրավճարը կարող է վճարել միանվագ կամ տարածամկետ: Ապահովագրողը ապահովագրավճարի չափը որոշելիս հաշվի է առնում ապահովագրական օբյեկտի և ապահովագրական ռիսկի բնույթը:

Պարտադիր ապահովագրության դեպքում ապահովագրավճարի չափը որոշվում է ապահովագրության ոլորտի վերահսկողությունն իրականացնող պետական մարմնի կողմից սահմանած սակագների հիման վրա:

### Ի՞նչպես է հաշվարկվում ապահովագրավճարը

Ապահովագրավճարը հաշվարկվում ապահովագրական գումարի կամ ապահովագրական օբյեկտի նկատմամբ:

Ապահովագրավճարի դրույքաչափը ապահովագրական սակագինն է, որն արտահայտվում է 100 դրամական միավորներով (տոկոսներով) և 1000 դրամական միավորներով (պրոմիլայով):

Օրինակ՝ շինությունների ապահովագրության սակագինն է 0.45, շինության արժեքը և ապահովագրական գումարը 10 մլն դրամ է, ապահովագրավճարը կկազմի (10,000,000 x 0.45 : 100) 45,000 դրամ:

### Ապահովագրողը կարող է դատական կարգով բողոքարկել ապահովադրի միայն մեկ պարտականություն

Ապահովադրի պարտավորությունն է պայմանագրով սահմանված չափով և կարգով վճարելու ապահովագրավճարը: Բացի ապահովագրավճարի կատարումից, որը կարող է բողոքարկվել դատական կարգով, ապահովադրի մնացած բոլոր պարտավորությունները դատական կարգով բողոքարկման ենթակա չեն: Ապահովադիրը կատարում է դրանք ելնելով իր շահերից՝ ապահովելու համար իր ապահովագրական պաշտպանությունը, քանի որ դրանց չկատարումը կարող է հանգեցնել հատուցման մերժմանը կամ դրա նվազեցմանը:

#### 4.4. Ապահովագրության պայմանագրում ապահովագրական պատահարի (պատահարների) ցանկի սահմանման կարգը

Ապահովագրության պայմանագրերում ապահովագրական պատահարի (պատահարների) ցանկը կարող է սահմանվել երկու մոտեցմամբ:

- **Ներկայացման եղանակով**, ըստ որի ապահովագրության պայմաններում և կանոններում բերվում է ապահովագրական պատահարների լրիվ կամ սպառիչ ցանկը, որոնց առաջ գալու պարագայում տրվում է ապահովագրական հատուցումը, իսկ բոլոր այլ դեպքերում ապահովագրողը որևէ պատասխանատվություն չի ստանձնում:
- **Բացառման եղանակով**, երբ ապահովագրության պայմաններում և ընդհանուր կանոններում թվարկված են բոլոր այն պատահարները, որոնց ի հայտ գալու դեպքում ապահովագրողը պարտավորություններ չի ստանձնում և հատուցում չի իրականացնում, իսկ մնացած բոլոր դեպքերում ապահովագրական հատուցում տրվում է:

#### 4.5. Ապահովագրության պաշտպանության ժամանակաշրջանը

Ապահովագրական պայմանագիրը պետք է հստակ անրագրի թե ո՞ր ժամանակահատվածում է ապահովադիրը գտնվում ապահովագրական պաշտպանության տակ կամ ո՞րն է ապահովագրության գործողության ժամկետը:

Ապահովագրության պայմանագիրն ուժի մեջ է մտնում կնքման պահից, եթե այլ բան նախատեսված չէ պայմանագրով:



***Օրինակ՝ պայմանագրով կարող է նախատեսվել, որ ապահովագրության պայմանագիրն ուժի մեջ է մտնում ապահովադրի կողմից ապահովագրավճարման ամբողջությամբ կամ պայմանագրով նախատեսված չափով վճարելու պահից:***

Պետք է իմանալ, որ եթե ապահովագրության պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 14-օրյա ժամկետում ապահովադիրը չի վճարում միանվագ կամ առաջին հերթական ապահովագրավճարը, ապա ապահովագրողն իրավունք ունի միակողմանի լուծելու ապահովագրության պայմանագիրը, եթե պայմանագրով նախատեսված չէ այլ ժամկետ կամ ապահովագրավճարի մուծման տարաժամկետման հնարավորություն:

**ԳՐԾՆԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ**

#### **Ռիսկի մեծության փոփոխությունը պարտավորեցնում է**

Պայմանագրի գործողության ընթացքում ռիսկի մեծության փոփոխության դեպքում ապահովադիրը (շահառուն) պարտավոր է ապահովագրողին անհապաղ հայտնել այդ փոփոխությունների մասին, եթե այդ փոփոխությունները կարող են որակապես ազդել ապահովագրական ռիսկի մեծանալու կամ նվազելու վրա:

#### 4.6. Ապահովագրության պայմանագրի էական հանգամանքները

Օրենքով հատուկ պահանջ և ընթացակարգ է սահմանվում ապահովագրի կողմից տրամադրվող տեղեկությունների վերաբերյալ արդեն իսկ պայմանագիրը կնքելու պահին:

Ապահովագիրն ապահովագրողի գրավոր պահանջով պարտավոր է նրան գրավոր տեղեկություններ հայտնել ապահովագրական պատահարի տեղի ունենալու և հնարավոր վնասի չափը որոշելու համար իրեն հայտնի էական հանգամանքների վերաբերյալ:

### ԳՐԾՆԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ ?



#### Սուտ տեղեկությունների հայտնելու հետևանքները

Ապահովագիրը պետք է նկատի ունենա, որ եթե ապահովագրության պայմանագիրը կնքելուց հետո պարզվի, որ ինքը պատահարի տեղի ունենալու էական նշանակություն ունեցող հանգամանքների մասին ապահովագրողին հայտնել է ակնհայտ սուտ տեղեկություններ, ապա ապահովագրողն իրավունք կունենա պահանջելու անվավեր ճանաչել պայմանագիրը և կիրառել քաղաքացիական օրենսգրքով խաբեության համար նախատեսված հետևանքները:

Այդ դեպքում ապահովագրի կողմից վճարված ապահովագրավճարները ապահովագրական ընկերությունը կփոխանցի պետական բյուջե: Բացի այդ ապահովագիրը ըկերությանը պետք է վճարի նրա կողմից գործարքը սպասարկելու հետ կապված գործավարման և այլ բնույթի ծախսերը:

Իսկ եթե ապահովագրողը իրականացրել է նաև հատուցում, ապա ապահովագիրը ապահովագրական ընկերությանը պետք է վերադարձնի դրամական կամ գույքային ձևով ստացած հատուցումը:

#### 4.7. Ապահովագրության պայմանագրի ընդհանուր պայմանները կամ կանոնները

##### *Ուշադիր եղեք պայմանագրի ընդհանուր պայմաններին*

Պայմանագրի ընդհանուր պայմանները կազմում են պայմանագրի անբաժանելի մասը և պարտադիր են կողմերի համար:

Որպես կանոն, ընդհանուր պայմանները (կանոնները) սահմանվում են ապահովագրության տեսակների և դասերի համար և, ըստ էության, ներկայացնում են որոշակի կանոնների ամբողջություն: Ընդհանուր պայմանների հիման վրա ապահովագրության պայմանագիր կնքելու դեպքում, պայմանագրում պետք է պարտադիր հղում կատարվի այդ պայմաններին:

Պարտադիր կարդացեք ընդհանուր պայմանները, քանի որ դրանք համարժեք են պայմանագրի կետերին:

### ԳՐԾՆԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ ?



#### Կարող է արդյո՞ք ապահովագրական պայմանագիրը կնքվել պատահարից հետո

Ապահովագրությունը ենթադրում է այն ռիսկերից առաջացող հետևանքների վերացում, որոնք հնարավոր է ի հայտ գան ապագայում՝ ապահովագրական պայմանագրի գործողության ընթացքում: Հետևապես արդեն իսկ տեղի ունեցած պատահարից հետո՝ այդ պատահարի հետ կապված ապահովագրության պայմանագիր չի կարող կնքվել:

#### 4.8. Ապահովագրական պայմանագիրը վաղաժամկետ լուծման հիմքերը

##### ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԻՄՔՈՎ

Ըստ օրենքի ապահովագրության պայմանագիրը վաղաժամկետ դադարում է, եթե դրա ուժի մեջ մտնելուց հետո վերացել է ապահովագրական պատահարի ի հայտ գալու հնարավորությունը, և դադարել է ապահովագրական ռիսկի:



Ապահովագրության պայմանագիրը դադարում է պայմանագրում սահմանված ժամկետը լրանալու ուժով:

##### ԱՊԱՀՈՎԱԳՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ

Ապահովագիրն իրավունք ունի միակողմանի լուծելու պայմանագիրը՝ այդ մասին ոչ պակաս, քան տասնհինգ օր առաջ ծանուցելով ապահովագրողին:

Ապահովագրության պայմանագիրը կարող է վաղաժամկետ լուծվել նաև ապահովագրի կողմից, եթե ապահովագրողի ապահովագրական գործունեության լիցենզիան ուժը կորցրած է ճանաչվել:

##### ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂԻ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ

Երբ ապահովագրողը սահմանում է ապահովագրավճարի վճարման լրացուցիչ ժամկետ և այդ ընթացքում ապահովագիրը չի վճարում ապահովագրավճարը, ապա ապահովագրողն իրավունք ունի միակողմանի լուծելու պայմանագիրը՝ առանց ապահովագրի այդ մասին ծանուցելու:

##### ՓՈԽԱԴԱՐՁ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅԱՄԲ



Ապահովագրության պայմանագիրը կարող է նաև վաղաժամկետ լուծվել կողմերից յուրաքանչյուրի նախաձեռնությամբ, եթե մյուս կողմը թույլ է տվել ապահովագրության պայմանագրի էական խախտում՝ խախտումը հայտնաբերելու պահից եռամսյա ժամկետում, ինչպես նաև ապահովագրի և ապահովագրողի փոխադարձ համաձայնությամբ:

#### ԳՐԾՆԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ



#### Ի՞նչ պատասխանատվության կարող է հանգեցնել ապահովագրության պայմանագրի էական հանգամանքների չբացահայտումը

Ըստ օրենսգրքի էական տեղեկությունները բացահայտելու պահանջն ապահովագրողի հայեցողությունն է: Եթե պայմանագիրը կնքվել է ապահովագրողի կողմից պահանջված տեղեկատվության բացակայությամբ, ապա ապահովագրողը չի կարող հետագայում այդ հիմքով լուծել պայմանագիրը կամ այն անվավեր ճանաչել:



#### 5. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՊՈԼԻՍ

##### 5.1. Ապահովագրության վկայագիր (պոլիս)

Ապահովագրական վկայագիրը գործարքը հավաստող փաստաթուղթ է: Որպես կանոն վկայագիրը ավելի փոքրածավալ է և հարմար է ավտոապահովագրության, ճանապարհորդության դեպքում:

Ապահովագրական վկայագիրը կամ պոլիսը կարող է փոխարինել ապահովագրության պայմանագիրը, եթե այն պարունակում է օրենքով սահմանված էական պահանջները:

## 5.2. Ապահովագրական վկայագրի վավերապայմանները

Ըստ օրենքի ապահովագրական վկայագիրը պետք է ներառի՝

- 1) ապահովագրության վկայագրի համարը,
- 2) ապահովագրողի անվանումը և գտնվելու վայրը, հեռախոսահամարը, ինտերնետային կայքի հասցեն,
- 3) ապահովադրի (շահառուի) անունը կամ անվանումը, գտնվելու վայրը և հեռախոսահամարը,
- 4) ապահովագրության համապատասխան դասը և ենթադասը (սահմանված են «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» ՀՀ օրենքով),
- 5) ապահովագրության պայմանագրի գործողության ժամկետը,
- 6) ապահովադրի ստորագրությունը, կնիքը (եթե ապահովադիրն իրավաբանական անձ է) և նշում այն մասին, որ ապահովադիրը ծանոթացել է ապահովագրության պայմանագրի պայմաններին,
- 7) ապահովագրողի կողմից լիազորված անձի ստորագրությունը, ընկերության կնիքը կամ ֆաքսիմիլային վերարտադրությունները,
- 8) ապահովագրության վկայագիրը տալու տարին, ամիսը, օրը,
- 9) ապահովագրական գումարի չափը,
- 10) ապահովագրական պատահարը կամ իրադարձությունը, որի տեղի ունենալու դեպքում տրվում է ապահովագրական հատուցումը,
- 11) ապահովագրական պատահարի տեղի ունենալու մասին ապահովադրի կամ շահառուի կողմից ապահովագրողին տեղեկացնելու կարգը և ժամկետները:

### Առաջին ապահովագրական պոլիսը

Պատմաբանների վկայություններով, Գերկա պատկերացումներով առաջին ապահովագրական պոլիսը կամ վկայագիրը տրվել է 1347թ. Ճենովայից դեպի Մայորկա կղզի ծովային բեռնափոխադրման համար:

## 6. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԱՀԱՐ ԵՎ ՀԱՏՈՒՑՈՒՄ

### 6.1. Ապահովագրական պատահարը

Ապահովագրական պատահարն ապահովագրական պայմանագրով նախատեսված այն դեպքն է կամ իրադարձությունը, որի տեղի ունենալու ուժով ապահովագրողը պարտավորվում է ապահովադրին կամ շահառուին վճարել ապահովագրական հատուցում:

### 6.2. Հատուցման ենթակա ապահովագրական դեպքերը

#### Ինչու՞ է ԿԱՐԵՎՈՐ կորստի անմիջական պատճառը

Առաջնորդվելով վնասի հատուցման անմիջական պատճառի սկզբունքով, ապահովագրական ընկերությունը հատուցում է միայն այն ռիսկերից առաջացած վնասները, որոնք նշված են ապահովագրության պայմանագրում:

Ապահովագրական դեպքի անմիջական պատճառը գործողությունների շղթայով, առանց այլ ուժերի միջամտության որոշակի արդյունքի բերող պատճառն է, որը գործում է այլ պատճառներից անկախ:

Ապահովագրական դեպքի առաջացման անմիջական պատճառի հերթականությունն էական չէ (առաջինը կամ վերջինը): Այն դիտվում է գերակա պատճառ բովանդակային



առումով: Դրա և արձանագրված արդյունքի միջև ըստ էության պետք է գոյություն ունենա ուղղակի կապ: Եթե միանգամից ի հայտ են գալիս մի քանի պատճառներ, ապա անմիջական պատճառը հանդիսանում է դրանցից գերական:

Օրինակ՝ Հրդեհից ապահովագրված գույքի կորուստի պահին արձանագրվել է հրդեհ, պայթյուն, և ջրի հեղհեղում: Կորստի գերակա պատճառը հրդեհն է, որն առաջացրել է պայթյուն և ջրի արտահոսք, որն էլ վնասել է գույքը: Ջրի արտահոսքից և պայթյունից գույքին հասցված ուղղակի վնասները ևս կհատուցվեն, քանի որ, ամեն դեպքում գերակա պատճառը հրդեհն է:

Հարկ է նշել, որ ապահովագրական դեպքի հետ կապված անուղղակի կորուստները, որպես կանոն, չեն հատուցվում, օրինակ՝ գույքի կորստի հետևանքով առաջացած անձի եկամուտների կորուստը: Այդ կորուստները կարող են առանձին դեպքերում ևս հատուցվել, եթե դրանք ընդգրկված են ապահովագրական ծածկույթում:

## ԳՐԾՆԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ ?

### **Ի՞նչ պետք է անի ապահովադիրը ապահովագրական դեպքի առաջացման ժամանակ և դրանից հետո**

Ապահովագրական դեպքի ի հայտ գալու ժամանակ ապահովադիրը անհապաղ կամ պայմանագրով սահմանված ժամկետում և ձևով տեղեկացնում է ապահովագրողին ապահովագրական պատահարի (դեպքի) առաջացման մասին և միևնույն ժամանակ պարտավոր է.

- Ձեռք առնել բոլոր հնարավոր միջոցները լրացուցիչ վնասների ու կորուստների կանխման համար:
- Գրավոր ձևով հայտ ներկայացնել ապահովագրական հատուցում վճարելու մասին:
- Ապահովագրողին տրամադրել առաջացած կորստի վերաբերյալ ամբողջ առկա տեղեկատվությունը, ինչպես նաև փաստաթղթերը, որոնք անհրաժեշտ են ապահովագրական պատահարի փաստը արձանագրելու և փաստացի կորստի մեծությունը գնահատելու համար: Այն դեպքում, երբ նման տեղեկատվությունը բացակայում է, ապահովադիրը պետք է աջակցի ապահովագրողին նման տեղեկատվության ու փաստաթղթերի ստացման գործում:
- Հնարավորություն ընձեռնել ապահովագրողին իրականացնելու ապահովագրված օբյեկտի տեղազննումը և օժանդակելու ապահովագրական պատահարի հետաքննության իրականացմանը՝ ապահովագրական պատահարի պատճառները և կորուստների մեծությունը բացահայտելու համար:

### 6.3. ՖՈՒՆԾԻԶԱ - Ապահովադրի մասնակցությունը ապահովագրական դեպքից առաջացած կորստի ծածկման մեջ

Ապահովադիրը կարող է մասնակցություն ունենալ ապահովագրական դեպքից առաջացած կորստի ծածկման մեջ: Այդ անձնական մասնակցությունն անվանում են ֆրանշիզա:


Ֆրանշիզան պայմանագրով սահմանված որոշակի գումար է, որը չի հատուցվում ապահովագրողի կողմից: Տարբերակում են երկու տեսակի ֆրանշիզա:



- **Պայմանական ֆրանշիզա`** չհատուցվող գումարի տեսակ, որի չափով ապահովագրողն ազատվում է հատուցում իրականացնելուց, սակայն այն գերազանցելու դեպքում հատուցումը տրվում է լրիվ ծավալով` ապահովագրական գումարի սահմաններում:
- **Ոչ պայմանական ֆրանշիզայի** դեպքում որոշակի շեմից բարձր կորուստների դեպքում հատուցման գումարը նվազեցվում է պայմանագրում սահմանված գումարի չափով:

### ԳՈՐԾՆԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ ?

#### Պայմանական ֆրանշիզայի հաշվարկը



Օրինակ` պայմանագրով ապահովագրական գումարը սահմանվել է 800,000 դրամ, ֆրանշիզայի մեծությունը 40,000 դրամ է: Մինչև այդ գումարի չափով վնասների դեպքում հատուցում չի իրականացվում, իսկ 40,000 դրամից բարձր վնասների դեպքում այն իրականացվում է լրիվ ծավալով, ապահովագրական գումարի սահմաններում, անկախ ֆրանշիզայի մեծությունից: Այսպես, եթե վնասը կազմել է 100,000 դրամ, ապա հատուցվում է 100,000 դրամը:

#### Ոչ պայմանական ֆրանշիզայի հաշվարկը

Ոչ պայմանական չհատուցվող գումարը կան ֆրանշիզան կարող է սահմանվել հետևյալ եղանակներով.

- Պայմանագրում ամրագրված գումարի չափով, օրինակ` 25 000 դրամ: Ապահովագրական վնասը կազմել է 500,000 դրամ: Հատուցման է ենթակա  $500\ 000 - 25\ 000 = 475\ 000$  դրամը:
- Պայմանագրում սահմանված տոկոսներով արձանագրված կորստի նկատմամբ: Օրինակ` ֆրանշիզան սահմանվում 5%: Ապահովագրական արձանագրված վնասը կազմել է 300 000 դրամ: Ապահովագրական հատուցումը կկազմի 95% կան 285 000 դրամ:
- Պայմանագրում սահմանված տոկոսներով ապահովագրական գումարի նկատմամբ: Օրինակ` 2%: Ապահովագրական գումարը կազմում է 4 000 000 դրամ, արձանագրված ապահովագրական վնասը 400 000 դրամ, ֆրանշիզան կկազմի 20 000 դրամ,  $(400\ 000 \text{ պայմանական միավորի } 5\% \text{-ը})$ , հատուցման ենթակա գումարը կկազմի 380 000 դրամ:

Ֆրանշիզայի կիրառությունը բարձրացնում է ապահովադրի կողմից գույքի պահպանման շահագրգռվածությունը և ունի ապահովագրական ռիսկերի կանխարգելիչ նշանակություն: Միաժամանակ, գործնականում, ֆրանշիզան թույլ է տալիս ապահովագրողին կրճատել փոքրածավալ կորուստների հետ կապված ժամանակատար գործավարման ծախսերը:

#### 6.4. Ապահովագրական հատուցումից ազատելու հիմքերը

Ապահովագրողն ազատվում է ապահովագրական հատուցում վճարելուց, եթե ապահովագրական պատահարը վրա է հասել ապահովադրի, ապահովագրված անձի կամ շահառուի դիտավորության հետևանքով:

Օրենքը նաև սահմանում է բացառություններ:

Մասնավորապես, ապահովագրողը չի ազատվում կյանքին կամ առողջությանը վնաս պատճառելու համար քաղաքացիական պատասխանատվության ապահովագրությունով հատուցում վճարելուց, եթե վնասը պատճառվել է դրա համար պատասխանատու անձի մեղքով:

Ըստ էության, այս բացառության չսահմանելը կրեթի նրան, որ քաղաքացիական պատասխանատվության ապահովագրությունը կդառնա անհնարին, քանի որ, ապահովադիրը, ապահովագրության այս տեսակում, հենց ինքն էլ պոտենցիալ «մեղավոր» կոչվում է:

*Օրինակ վարորդների, մասնավոր բժիշկների, պատասխանատվությունը երրորդ անձանց վնաս հասցնելու, կլինի անհնարին, քանի որ վարորդը և բժիշկը, տվյալ դեպքում ապահովագրում են իրենց գործողություններով և մեղքով վնաս հասցնելու ռիսկը:*

Համաձայն օրենքի ապահովագրողն ազատվում է հատուցում վճարելուց հետևյալ դեպքերում,

- ա) միջուկային պայթյունի, ճառագայթման կամ ռադիոակտիվ վարակման ներգործության,
- բ) ռազմական գործողությունների, ինչպես նաև զորաշարժերի կամ այլ ռազմական միջոցառումների,
- գ) քաղաքացիական պատերազմի և օրենքով սահմանված այլ դեպքերի:

*եթե պայմանագիրը սահմանված չէ հատուկ վերը նշված դեպքերի համար*

Հատուցումից ազատման հիմքերից է հանդիսանում նաև ապահովագրված գույքը պետական մարմինների կարգադրությամբ առգրավելու, բռնագրավելու, ռեկվիզիցիայի, դրա վրա արգելանք դնելու կամ այն ոչնչացնելու հետևանքով առաջացած վնասների ռիսկը, եթե այլ բան նախատեսված չէ պայմանագրով:

#### 6.5. Հատուցման մերժման հիմքերը

Որքա՞ն էական են միտումնավորության հանգամանքները

Կարևոր է տարանջատել ապահովագրական հատուցումից **պարտադիր ազատելու** և **մերժելու և նվազեցնելու** հիմքերը:

Ելնելով ապահովագրական դեպքի առաջացման առանձին հանգամանքներից, եթե ապացուցված է ապահովադրի (ապահովագրված անձի կամ շահառուի) մեղավորությունը՝ ապահովագրական ընկերությունն իրավունք ունի նվազեցնելու կամ մերժելու հատուցման վճարումը:

Սակայն ապահովադրի մեղավորության պարագայում, կախված հանգամանքներից ապահովագրողը կարող է նաև ազատվել հատուցում վճարելուց:

Հատուցման մերժելու և նվազեցնելու հիմք է հանդիսանում նաև այն, որ ապահովագրության պայմանագիր կնքելիս ապահովադիրն ներկայացրել է կեղծ տեղեկություններ կամ թաքցրել է դրանք:

Ապահովագրական ընկերությունն իրավունք ունի նաև մերժելու հատուցման վճարումն այն դեպքում, երբ ապահովադիրը փաստացի հատուցում է ստացել պատահարի համար մեղավոր անձից, կամ նվազեցնելու հատուցումը մեղավոր կողմից ստացված հատուցման չափով:

## ԳՐԾՆԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ

**Ապահովագրողը կարող է հրաժարվել ապահովագրական պարտավորությունների կատարումից կամ փոփոխել այն պայմանները, որոնք վերաբերվում են հատուցմանը մի շարք դեպքերում**

### Կեղծիք

- Ռիսկի գնահատման առումով նախապես հայտնել է ոչ ճիշտ, կեղծ կամ ոչ ամբողջական տեղեկատվություն այն հանգամանքների վերաբերյալ, որոնք էական էին ռիսկի գնահատման համար:

### Տեղեկատվության չտրամադրում

- Ապահովագրողին չի տեղեկացրել ռիսկի էական պայմանների փոփոխության մասին:

### Խոչընդոտում և կարգի խախտում

- Ապահովագրական պատահարի մասին սահմանված կարգով չի տեղեկացրել ապահովագրողին և խոչընդոտել է ապահովագրողի ներկայացուցչին՝ որոշելու առաջացած վնասի բնույթը, հանգամանքները և չափը:

### Փաստաթղթերի բացակայություն

- Ապահովագրողին չի ներկայացրել վնասի մեծությունը որոշելու համար անհրաժեշտ փաստաթղթերը:

### Միտումնավոր անգործություն

- Չի ձեռնարկել վնասի կանխարգելման և չափերի նվազեցման գործողություններ, որը հանգեցրել է հակառակ արդյունքների:

Սակայն պետք է նկատել, որ վերը նշված հանգամանքները չեն կարող միանշանակ մեկանբանվել և պարտադիր կիրառվել, օրինակ՝ ապահովադիրը պատահարի տեղի ունենալուց հետո չի ձեռնարկել վնասի կանխարգելման և նվազեցման գործողություններ, սակայն դրա պատճառը այն է, որ նա գտնվել խուճապահար և սթրեսային վիճակում և հետևաբար չէր կարող խելամիտ և օգտակար գործողություններ կատարել:

## **Ապահովագրված անձի եւ շահառուի պարտավորությունները**

Ապահովագրված անձի կամ շահառուի օգտին պայմանագրի կնքումը ապահովադիրին չի ազատում որոշակի պարտականությունների կատարումից: Սակայն պայմանագրով կարող է նախատեսվել, որ ապահովադիրը այլևս պարտավորություններ չի կրելու, կամ էլ ապահովադիրի պարտականությունները նախապես կատարել է այն անձը, ում օգտին կնքվել է պայմանագիրը:

Նախքան հատուցում կատարելն ապահովագրողն իրավունք ունի շահառուից պահանջել ապահովադիրի և ապահովագրված անձի (շահառու չհանդիսացող) պայմանագրով ստանձնած պարտականությունների կատարումը:

Բոլոր դեպքերում ապահովադիրի կողմից պարտականությունների չկատարելու հետևանքների ռիսկը կրում է շահառուն:

## 6.6. Սուբրոգացիայի սկզբունքը

Սուբրոգացիան ապահովագրության իրավական սկզբունքներից մեկն է:

Սուբրոգացիան ենթադրում է, որ ապահովագրողը ապահովադրի փոխարեն, կարող է հատույցի պահանջ ներկայացնել կորուստների առաջացման համար մեղավոր կողմին:

Այս սկզբունքի կիրառումը կանխում է ապահովադրի կողմից նույն կորստի համար երկու անգամ հատուցում ստանալը՝ ապահովագրողից ու միևնույն ժամանակ մեղավոր՝ վնաս պատճառած կողմից:

Սուբրոգացիան մեղավոր անձին պատասխանատվության է կանչում իր պատճառած վնասի համար: Սուբրոգացիայի կիրառումը նպաստում է ապահովագրական սակագների նվազմանը:

Սուբրոգացիայի իրավունքը ծագում է, երբ ապահովագրողը փաստացի վճարել է հատուցումը:

Ապահովադիրը չի կարող խոչընդոտել ապահովագրողի սուբրոգացիայի իրավունքի իրագործմանը:

**ԳՈՐԾՆԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ** 

### **Ո՞ր դեպքում չի կիրառվում սուբրոգացիայի սկզբունքը**

Սուբրոգացիան չի կիրառվում կյանքի ապահովագրությունում և, որպես կանոն, առողջության ու բազմաթիվ այլ անձնական ապահովագրության տեսակներում: